

« ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ »

Գ. ԹԱՐՎԵՐԴԵԱՆԻ

Հայաստանի պատմութեան եւ գրականութեան ինստիտուտը 1937 թուին հրատարակել է Գ. Թարվերդեանի «Հայ Աշուղներ» խորագրով 560 էջերից բաղկացած հաստակազմ հատորը, ուր ամփոփուած են 17-20րդ դարաշրջաններում ապրող հայ ժողովրդի վաստակաւոր աշուղների ստեղծագործութիւնները:

Աշուղական գրականութեան այս հաւաքածոն ամբողջական մամուլում մինչեւ օրս ուսումնասիրութեան եւ գրադատականի նիւթ չի դարձել, որով արտասահմանի հայ խմբագիրները, բանասէրները, գրադատները, արուեստագէտներն ու մշտաւորականները որեւէ գաղափար չունին գրքի բովանդակութեան մասին:

Գուսանական հատորի էական արժանիքների ու հիմնական թերութիւնների մասին հայ գրականագէտներին որոշ ծանօթութիւն տալու համար, այստեղ սեղմ տողերով զօնեք ժողովածուի ընդհանուր պատկերը:

Գիրքը պատկերող աշուղական երգերը հաւաքել եւ կազմել է բանահաւաք Գեղամ Թարվերդեանը, իսկ առաջարանը գրել է յայտնի բանասէր, աշուղագէտ եւ գեղարուեստագէտ — խմբագիր Գարեգին Լեւոնեանը:

Աշուղական ժողովածուն իր բովանդակութեամբ բազմեւան է ու հարուստ եւ որի առաւելութիւնը կազմում են առաջին անգամ լոյս տեսած անտիպ երգերը, որոնք հայ գուսանական արուեստի պատմութեան մէջ կարեւոր տեղ են զբաղեցնում:

Գրքի մի այլ էական բաժինն աշուղական գրականութեան մասնագէտ Գարեգին Լեւոնեանի գրած առաջարանն է, որ հիմնական զօնեք տեղեկութիւններ է տալիս հայ ստեղծագործ ժողովրդի մի-

ջից հրապարակ եկած թափառաշրջիկ եւ վաստակաւոր հայ աշուղների մասին, որոնք իրենց սաղը կամ չօնդուրը եւ կամ քեամանչան առած՝ շրջելով գաւառից գաւառ, զիւղից զիւղ, ամէնուրեք տարածել են աշուղական երգերը եւ ժողովրդի սրբունամ վառ սրահէլ գուսանական արուեստի, երգերի եւ երաժշտութեան սէրը:

Իր առաջարանում Լեւոնեանը բացատրել է տաղերու—բանաստեղծների եւ աշուղների էական տարբերութիւնը, միաժամանակ լուսարանել է նրանց կոչման եւ պարտականութեան էութիւնը, նրանց զերն ու նշանակութիւնը, որ նրանք ունեցել են հայ ժողովրդի կեանքում: Ընդգծել է նաեւ, թէ մինչեւ 19րդ դարի վերջը եւ 20րդ դարաշրջանի առաջին քառորդը, 325 տարուայ ժամանակաշրջանում, հայ ժողովրդի աշուղների թիւը հասել է մօտ 400ի, որոնց մէջ եղել են անուանի գուսաններ, որոնք խոշոր տաղանդ են զբաղեցրել եւ դարձել են աշուղական գրաւորների հիմնադիրներ, իսկ իրենց լաւագոյն երգերով եւ վարպետ նուագածութեամբ՝ սէր ու յարգանք են վայելել իրենց միջավայրում:

Լեւոնեանը կանգ է առել նաեւ աշուղների յօրինած երգերի լեզուական արուեստի եւ չօչափած նիւթերի մասին:

«Հայ Աշուղներ» գրքում Լեւոնեանի պարզած տեղեկութիւններն ու ընդգծած տեսակէտները հայ աշուղագէտների համար, անկասկած, նորութիւններ չեն: Նրա չօչափած էական նիւթերը հայ աշուղական գրականութեան մէջ վաղուց քննութեան են առնուել. միաժամանակ հայ մամուլում արձանագործել է գուսանական հարուստ ու բազմաբովանդակ բանաստեղծութեան մասին. նշուել է, թէ

հայ աշուղները գրականութեան աւանդ են թողել ոչ միայն սիրային, կրօնա—բարոյախօսական, խրատական, կենցաղային ոտանաւորներ, այլեւ յօրինել են հասարակական—սոցիալական, քաղաքական եւ պատմական բովանդակութեամբ երգեր: Նրանք երգել են նաեւ իրենց սաղած ժամանակի դանադան զէպերն ու անցքերը: Նոյնպէս զովերգել են հայրենի նշանաւոր քաղաքներն ու վայրերը, իսկ իրենց գրած երգիծական ոտանաւորներով քննադատել են անհատական, հասարակական եւ կենցաղային կեանքի թերութիւններն ու արատները:

Վաստակաւոր Լեւոնեանն իր առաջարանում պարզել է նաեւ մի կարեւոր հանգամանք, թէ աշուղներին արդեօք կարելի է բանաստեղծներ համարել: Այս էական հարցը վերլուծելիս՝ նա եկել է այն ճիշտ եզրակացութեան, թէ աշուղների մէջ կան բանաստեղծներ, բայց բոլոր աշուղները բանաստեղծներ չեն:

Առաջարանից տեղեկանում ենք նաեւ, որ Գ. Լեւոնեանը Հայաստանի պատմութեան եւ գրականութեան ինստիտուտի յանձնարարութեամբ՝ Գեղամ Թարվերդեանի հաւաքած աշուղական երգերի հեռանօթանալիս, մի շարք ուղղումներ, յաւելումներ եւ յազարումներ է կատարել ոտանաւորների այն տողերի մէջ, որոնք աղաւաղուած են հասել կամ Թարվերդեանի գրչով սխալ են ընդօրինակուել, որով խանգարուել են երգերի վանկային, յանդային եւ աշուղական տաղաչափութեան օրէնքները:

Սակայն, չնայած նշուած հիմնական թերութիւններին ու պակասութիւններին, Գ. Թարվերդեանի «Հայ Աշուղներ» գիրքը, իր որոշ առաւելութիւններով, արժանի է ուշադրութեան:

Գրքի մի ուշադրաւ երեւոյթն այն է, որ այնտեղ պատկերանում են հայ աշուղական գրականութեան անմահ վարպետներից Սայեաթ—Նովայի, Զիւանու, Զամալի, Թուրինջի, Շիրինի եւ այլ աշուղների անտիպ նոր ոտանաւորները, որոնք գրքում առաջին անգամ են լոյս տեսել:

Գրքում հանդէս են եկել նաեւ մի շարք նշանաւոր աշուղներ — Քէչիչ օղլի, Նիտայի, Սարի օղլան, Բաղալ եւ ուրիշներ, որոնք հայ աշուղական գրականութեան պատմութեան մէջ յայտնի են իրենց յօրինած միայն թրքերէն երգերով: Թարվերդեանը յայտնաբերել է նրանց գրած հայերէն մի քանի ոտանաւորները:

«Հայ Աշուղներ» գրքում կան աշուղներ, որոնք յայտնի են միայն իրենց անուններով: Դրանցից յիշատակենք աշուղ Զիւանու վարպետը՝ Սիւայի, աշուղ Շիրինի ուսուցիչը՝ Բաւէ, աշուղ Ռամզի, աշուղ Սանամ Նովասի եւ ուրիշներ, որոնց մի քանի անյայտ երգերը Թարվերդեանը փրկել է կորստից:

Գրքի էջերը զարդարում են նաեւ հայ աշուղական գրականութեան անյայտ մի քանի հին եւ շնորհալի աշուղներ՝ Թարար — Դաղա, Փիր — Ղալամ, Հալլամ օղլի եւ ուրիշներ:

«Հայ Աշուղներ» հատորում առանձնաշատուկ տեղ են զբաղեցնում կին—աշուղները, որոնք հայ գուսանական արուեստի պատմութեան մէջ նշանակալից երեւոյթ են: Դրանցից յայտնի են՝ Ղարսեցի Վարսն (Վարսենիկը), հին—Նախիջևանցի Մարսն (Մարիամը), Մահմուդջուցի Սանամը եւ ուրիշներ:

Իր «Հայ Աշուղներ» հատորով Գ. Թարվերդեանը հարստացրել է հայ աշուղական գրականութեան գանձարանը:

* * *

Սակայն, Գեղամ Թարվերդեանի գրքում, ճշտուած գրական յատկանիշների հետ, բացի Գ. Լեւոնեանի ընդգծած թերութիւններից, կան մի շարք այլ հիմնարութիւններից, անճիշտ տեղեկութիւններ եւ քմահաճ բացատրութիւններ, որոնք աղաւաղում են հայ աշուղական գրականութեան պատմութեան որոշ էջերը: Յայտուն գաղափար տալու համար՝ այստեղ առաջ բերենք մի քանի փաստական տրեւումներ:

Ա) Թարվերդեանն իր գրքի ճակատին «Հայ Աշուղներ» խորագրով մեծատառ

ընդհանուր վերնադրից յետոյ ներքեւում աւելացրել է հետեւեալը. «Անտիպ երգերի ժողովածու», իսկ զրբի 19րդ էջում զրած «Երկու խօսք»-ում ընդգծել է այսպէս. «Աշխատել եմ զրի առնել բացառապէս անտիպ երգեր: Դրա համար հաւաքածս նիւթերը համեմատել եմ հայ աշուղների տպագրուած երգերի հետ եւ ժողովածուից դուրս եմ ձգել տպագրուածները: Այնուամենայնիւ հնարաւոր է, որ իմ հաւաքած նիւթերի մէջ սպրդած լինեն եւ ինձ անյայտ, տպուած երգեր»:

Այս տողերը զրելիս Գ. Թարվերդեանը մոռացել է մի կարեւոր հանգամանք, որ ամէն մի հայ աշուղագէտի վսեմ կոչումը եւ բարոյական պարտականութիւնն է ոչ միայն ճշմարտութիւնն արձանագրել, այլեւ փաստական տեղեկութիւնները հաղորդել հարադատութեամբ: Միանգամայն անհասկանալի է, թէ ինչո՞ւ Թարվերդեանն աշխատել է թաքցնել մի բացայայտ ճշմարտութիւն, որը յայտնի է հայ աշուղագէտներին:

Դեռ 1920-1921 թուականներին Սպահան նահանգի Նոր-Ջուղա արուարձանում, առանձին զրբոյկներով հրատարակեցի «Պարսկահայ աշուղներ»ի անտիպ երգերը, որոնցից օգտուել է Գ. Թարվերդեանը, ինչպէս ինքն էլ յիշատակել է իր խմբագրած «Հայ Աշուղներ» զրբի 50րդ էջում այսպէս. «Աշուղների կենսագրական տեղեկութիւնները կազմելիս... օգտուել ենք հետեւեալ աղբիւրներից... Ս. Ա. Երեմեան - «Պարսկահայ աշուղներ»... Ուրեմն պարզ է, որ Իրանահայ աշուղների ոտանաւորները, բացի մի-երկուից, չէին կարող անտիպ լինել, երբ Թարվերդեանը 1937 թուին, Երեւանում, հրատարակել է իր «Հայ Աշուղներ» հատորը: Եւ արդարեւ, փաստն ու ճշմարտութիւնն այն է, որ նրա խմբագրած աշուղական հատորում անտիպ երգերի չարքում կան վաղուց տպագրուած աշուղական երգեր, որոնք Թարվերդեանի զրբով դարձել են անտիպ:

Նոյն երեւոյթն արձանագրել է նաեւ Ս. Նազինեանը «Հայ գուսաններ» զրբի վերջաբանում (Հայպետհրատ, Երեւան,

1957), ընդգծելով այսպիսի տողեր. «Տըպագրուած ներկայ ժողովածուի մէջ կազմողը (Թարվերդեանը, Ա. Ե.) զետեղել էր մեծաքանակ «անտիպ երգեր», բայց խմբագրման ընթացքում պարզուեց, որ այդ երգերի մեծ մասը տպագրուած են, ուստի ժողովածուն փոխեց իր բնոյթը»: Ա. Նազինեանի այս տողերն էլ, իրենց լուծեամբ, ընդգծում են, որ Գեղամ Թարվերդեանն օժտուած է աշուղական տպագիր ոտանաւորներն անտիպ յայտարարելու առանձնայատուկ ձիրքով. բայց նա մոռացել է, որ կան հայ բանասիրութեան Արդոսեան աչքերը, որոնք իրաւունք ունեն իրեն բացատրելու, որ իր մօտեցումը լաւ յատկանիշ է:

Թարվերդեանի յայտարարութիւնը հարգատ է ճիշտ կը լինէր, միայն այն ժամանակ, եթէ նա իր զրբի ճակատին տպագրել տար այսպէս. «Անտիպ եւ տըպագիր երգերի ժողովածու»:

Բայց մեր ընդգծումները հաստատուելու համար 1937 թուին տպուած «Հայ Աշուղներ» զրբից այստեղ առաջ բերենք աշուղական այն տպագիր ոտանաւորները, որոնք Թարվերդեանի զրբով անտիպ են յայտարարուել:

1. - «Հայ Աշուղներ» զրբի 7րդ էջում տպագրուած է իրանահայ աշուղ Ղուլ Արդունու «Երեսախան» խորագրով ոտանաւորը: Թարվերդեանի «անտիպ» համարած այս ոտանաւորն առաջին անգամ հրատարակել եմ 1921 թուին, Նոր-Ջուղայում, «Պարսկահայ աշուղներ» խորագրով զրբոյկում, Թարվերդեանի «Հայ Աշուղներ» զրբը լոյս տեսնելուց շատ առաջ. իսկ երկրորդ անգամ հրատարակել եմ «Պարսկահայ աշուղներ» ժողովածուիս մէջ, 1930 թուին:

2. - Թարվերդեանի իր զրբի 12րդ էջում տպագրել է իրանահայ աշուղ Բաղէր օղլու «Գնացի դիրարս տեսնեմ» ոտանաւորը: Թարվերդեանի «անտիպ» համարած այս ոտանաւորն առաջին անգամ տպագրել եմ 1921 թուին, իմ խմբագրած «Պարսկահայ աշուղներ» զրբոյկի Գ. պրակի մէջ:

3. - «Հայ Աշուղներ ժողովածուի 14րդ էջում տպագրուած է իրանահայ տաղանդաւոր երգիծարան՝ աշուղ Ամիր օղլու «Ոչխարն ու զէլը» ոտանաւորը, որ նոյնպէս անտիպ է: Առաջին անգամ հրատարակել եմ 1920 թուին, իմ խմբագրած «Պարսկահայ Աշուղներ» զրբոյկի Բ. հատորում:

4. - Թարվերդեանի իր «Հայ Աշուղներ» զրբի 35րդ էջում տպագրել է իրանահայ նշանաւոր աշուղ՝ Յարութ օղլու «Ունքերդ ինձ կեռացնում ա» խորագրով ոտանաւորը, որ նոյնպէս անտիպ է: Առաջին անգամ տպագրել եմ 1920 թուին, «Աշուղ Յարութն օղլի» Ա. զրբի 24րդ էջում:

5. - Թարվերդեանի զրբի 36րդ էջում տպագրուած է աշուղ Յարութն օղլու «Փոփոխուել է նշաններդ», որը դարձեալ անտիպ է: Հրատարակել եմ իմ խմբագրած «Աշուղ Յարութն օղլի» խորագրով Ա. զրբի 20րդ էջում, 1920 թուին:

6. - «Հայ Աշուղներ» զրբի 176րդ էջում տպագրուած է աշուղ Ղասար օղլու «Ոտը սրտից» ոտանաւորը, որի մի այլ փոփոխակը՝ «Սեռ դարնան ծաղկըներուն» խորագրով տպագրուած է «Լուսնայ» հանդէսի 313րդ էջում: Աշուղն ոտանաւորը զրբի է առել 1899 թուին, էջմիածնի դաւառի Դովրի զիւղում:

7. - Թարվերդեանի զրբի 54րդ էջում տպագրուած է աշուղ Բանդա Արէլի «Աշխարհի մէջ» ոտանաւորը, որ նոյնպէս անտիպ է. առաջին անգամ տպագրուել է 1902 թուին, «Ազգագրական հանդէս»ի 88րդ էջում:

Փաստական այլ օրինակներ այլեւս առաջ չենք բերում: Նկատենք միայն, որ Թարվերդեանի «Հայ Աշուղներ» զրբի ճակատին տպուած «Անտիպ երգերի ժողովածու» նախագատութիւնը ճիշտ չէ եւ արդիւնք է թիւրիմացութեան, որովհետեւ զրբում կան բազմաթիւ տպագրուած աշուղական ոտանաւորներ:

Բ) Թարվերդեանի «Հայ Աշուղներ» զրբում իշխում են նաեւ այլ աղաւաղում-

ներ: Տպագրուած են ոտանաւորներ, որոնց հեղինակները միանգամայն տարբեր կերպարներ են: Գրբի 28րդ էջում կարգում ենք. «Միսկին Ստեփան - «Խնձոր ծառին»: Թէ Թարվերդեանն ի՞նչ աղբիւրից է քաղել ոտանաւորը, այդ մասին զրբում որեւէ յիշատակութիւն չի արել: Բայց մի հանգամանք պարզ է, որ ոտանաւորի ոճը, կառուցողական արուեստը եւ բարբառային երանգաւորումները վկայում են, որ դա Նոր-Ջուղայի ժողովրդական գրականութեան փչրանքներից մէկն է եւ չի պատկանում Միսկին Ստեփանի զրբին: Ոտանաւորը զուտ ժողովրդական լինելու բնոյթ ունի եւ իր կառուցողական արուեստի հսկան յատկանիշերով ձեռնադրում է Նոր-Ջուղայի ժողովրդական բանահիւսութեան զանաւարներ: Այդ հանգամանքն էլ հաստատում է, որ Գ. Թարվերդեանն ո՛չ միայն Նոր-Ջուղայի բարբառին եւ ժողովրդական բանահիւսութեան ոճին ու արուեստի էութեանը քաջածանօթ չէ, այլեւ չի ուսումնասիրել իրանահայ աշուղական եւ ժողովրդական երգերի բարբառային, ոճային, վանկային, յանգային ու տաղաչափական արուեստների հսկան առանձնայատկութիւններն ու նրբութիւնները, որով Նոր-Ջուղայի ժողովրդական ստեղծագործութիւնը վերագրել է աշուղ Միսկին Ստեփանին:

Գ) Ուղղենք Թարվերդեանի մի այլ սրբալի: 1947 թուին նա խմբագրել է «Հայ գուսաններ» աշուղական գրականութեան հատորը, որի 45-46րդ էջերում իրանահայ աշուղ Ղուլ էգաղին է վերագրել «Եար քո» խորագրով ոտանաւորը, որ բացարձակ թիւրիմացութիւն է եւ մի անգամ եւս հաստատում է այն ճշմարտութիւնը, թէ Թարվերդեանը չի ուսումնասիրել ո՛չ միայն Նոր-Ջուղայի բարբառը, այլեւ քաջածանօթ չէ աշուղ Ղուլ էգաղին ոճին ու արուեստին: Ոտանաւորն իր կառուցողական եւ ոճային ինքնատիպ արուեստով միանգամայն տարբերում է Ղուլ էգաղի ինքնուրոյն ոճից, իսկ լեզուն՝ Նոր-Ջուղայի բարբառից:

Դ) Թարվերդեանի «Հայ Աշուղներ» զբոսի էջերը զարդարում են նաև կենսագրական անճիշտ եւ սխալ տեղեկություններ: Ամէն մի հմուտ եւ բարեխիղճ բանասէր ու բանահաւաք բարոյական պարտականութիւնն է տեղագրական, աշխարհագրական, թուական եւ կենսագրական ճշգրիտ տեղեկություններ հաղորդել: Դա է զիտական բանասիրութեան պահանջը: Յատկապէս կենսագրական տեղեկությունները հաղորդելիս՝ անհրաժեշտ է բարեխիղճ եւ լուրջ մօտեցում: Սխալ տեղեկությունները, բացատրություններն ու լուսարանություններն աղաւաղում են ճշմարտությունը եւ նիւթի տպագրությունից յետոյ առաջ են դալիս թիւրիմացություններ: Ճաւալի-երեւոյթն այն է, որ Թարվերդեանն իրանահայ աշուղների մասին տեղեկություններ հաղորդելիս՝ լուրջ չի մօտեցել, շտապել է եւ սխալներ է արձանագրել: Սրբազանք նրա հաղորդած սխալներէից մի քանիսը:

«Հայ Աշուղներ» զբոսի 501րդ էջում Թարվերդեանն աշուղ Ղուլ Արզունու մասին զբոսի է այսպէս. «Եղել է Նոր-Ջուղայի կողմերից»: Ի՞նչ էք հասկանում այս անորոշ եւ մութ արտայայտությունից: Ղուլ Արզունին, որպէս բնիկ Նոր-Ջուղայցի, զբոսի է Նոր-Ջուղայի բարբառով, իսկ այդ բարբառը Նոր-Ջուղայից դուրս, այլ վայրերում, չեն գործածում, որով Ղուլ Արզունին Նոր-Ջուղայի կողմերից չի կարող լինել. իսկ Թարվերդեանը «կողմ» ասելով եթէ նկատի ունի Սպահանի նահանգի Փէրիա եւ Չարմահալ գաւառների հայաբնակ զիւղերը, ապա նա պէտք է նկատի ունենայ, որ այդ երկու գաւառներում բնակուող հայ գեղջուկները խօսում են իրենց ինքնուրոյն եւ տարբեր բարբառներով:

Որ Ղուլ Արզունին բնիկ Նոր-Ջուղայցի է, այդ հանգամանքն արձանագրել է նաև տաղանդաւոր խմբագիր, հրատարակախօս, մանկավարժ եւ խաչատուր Արթուրեանի գաղտնիկ Մ. Թաղիադեանը: Իր խմբագրած «Ազգասէր» հանդէսում (1845 թ. Կալիաթա) նա տպագրել է ա-

շուղի երկու բանաստեղծությունը՝ «Մեղայ Տէր» եւ «Ղարիր տեղ նաչաղ եմ», իսկ երկու մասին տուել է սեղմ տեղեկություններ:

1874 թուին աշուղ Ղուլ Էղաղի եւ Արզունու մասին յիշատակել է Երեսույցի «Սիւն» ամսագրի խմբագրությունը: Նոյն հանդէսի թիւ 10ում կարգում ենք. «Երգիչներն ջուղայցի են». իսկ Հ. Ղեւոնդ Ալիշանը «Յուշիկի հայրենացի հայոց» արժէքաւոր հատորում զբոսի է. «Բուն ջուղայցեցոյ մէջ կու յիշուին Էղաղ, Արզունի, Բաղէր օղլի...»: Այս փաստական վաւերագրերը հաստատում են, որ Ղուլ Արզունին ծնուել է Նոր-Ջուղայում եւ ոչ թէ Նոր-Ջուղայի կողմերիցն է, ինչպէս իր զբոսում սխալ տեղեկություն է տուել Գեղամ Թարվերդեանը:

Ե) Գծենք մի այլ էական փաստ: «Հայ Աշուղներ» զբոսի 502րդ էջում Թարվերդեանը սեղմ տողերով պատկերել է իրանահայ նշանաւոր երգիծարան-աշուղ Ամիր օղլու կենսագրական տուեալները, ուր երգչի ծննդավայրի մասին հաղորդել է այսպէս. «Ծնուել է Սպահանի շրջանի Բուրվարեամ գիւղում»: Սխալ է: Ամրողը իրանում Բուրվարեամ գիւղ գոյութիւն չունի, ոչ էլ իրանական քարտէզի վրայ կարող էք այդ անունով գիւղ գտնել: Թարվերդեանը քմահաճ տեղեկութեամբ աղաւաղել է աշուղ Ամիր օղլու ծննդավայրի տեղը: Աշուղը ծնուել է ոչ թէ Բուրվարեամ գիւղում, որն երբեք գոյութիւն չունի, այլ Սպահանի նահանգի հայաբնակ Բուրվարի գաւառում:

Չ) Պարզենք մի այլ կարեւոր երեւոյթ: Հայ մամուլում քանիցս շեշտել ենք, թէ աշուղական գրականութեամբ զբաղուող բանահաւաքը պէտք է լաւ ծանօթ լինի իր ուսումնասիրած շրջանի ժողովրդի բարբառին: Թարվերդեանը ծանօթ չլինելով Նոր-Ջուղայի եւ Սպահանի նահանգի Փէրիա եւ Չարմահալ գաւառների հայաբնակ զիւղերի ժողովրդական բարբառներին, մի շարք ոտանաւորների հարազատ տողերի ճիշտ բառերը չի կարողացել վերա-

կանգնել եւ աշուղական երգերի մէջ իշխող բարբառային ու ոճային ուրոյն երանգաւորումները եւ նրբութիւնները հրատարակել է միանգամայն աղաւաղումով: Համեմատութեան համար, այստեղ առաջ բերենք տաղանդաւոր աշուղ Յարթուն օղլու մի երգի պատկերը.

Աշուղ Յարթուն օղլու դարբարից

Ունքերդ ինձ կեռացնում ա,
Աչքերդ ջամին դուրբան ամ.
Չորցած սիրտս թողացնում ա,
Երեսիդ նամին դուրբան ամ:

Էդ քո քեւալում ու դօփտարն,
Նա է իմ դարդերիս ճարն.
Դարդը է քան ըզթէ շաքարն,
Պաւնչկուղ համին դուրբան ամ:

Դանի որ ինձ կը ճանանչես,
Անշահոտ վարթ կանանչես,
Երբոր Յարթուն օղլի կանչես,
Ձէնիդ մուղամին դուրբան ամ:

Թարվերդեանի «Հայ Աշուղներ» գրքից

Ունքերդ ինձ կեռացնում ա,
Աչքերդ ջամին դուրբան ամ.
Չորցած սիրտս թողացնում ա,
Երեսիդ համին դուրբան ամ:

Էդ քո քաւմու գիրիֆտարն,
Նա է իմ դարդերու ճարն,
Դարդը ա քեանց զշաքարն,
Պակներուդ նամին դուրբան ամ:

Դանի որ ինձ կճանաչես,
Անուշահոտ վարդ-կանաչ ես.
Երբոր Յարթուն օղլուն կանչես,
Ձէնիդ մուղամին դուրբան ամ:

Աշուղ Յարթուն օղլին իր երգերը յօրինել է Չարմահալի գեղջուկ ժողովրդի, մասամբ էլ Նոր-Ջուղայի բարբառի երանգաւորումներով եւ պարսկախոս բառերով: Թարվերդեանը ծանօթ չլինելով այդ բարբառների եւ պարսկերէն բառերի ներթուրումներին, ոտանաւորի մի շարք բառերի հարազատութիւնը չի կարողացել

ստուգել, որով երեսիդ նամը փոխել է երեսիդ համին, քեւալում ու դօփտարն - քեւալում գիրիֆտար, դարդերին - դարդերում, պարնչկուղ - պակներուդ, անշահ - անուշ, վարթ - կանանչես. ժողովրդական գեղեցիկ արտայայտությունը քմահաճ կերպով դարձել է վարդ-կանաչ ես:

Նոյն երեւոյթը նկատելի է աշուղ Ղուլ Արզունու երգերում, ուր կան բարբառի եւ ոճային արուեստի աղաւաղումներ, ինչպէս՝ «Երեսալսան» խորագրով ոտանաւորում որչափ բառն եղել է որչափ, որ նման բառ Նոր-Ջուղայի բարբառում գոյութիւն չունի, օլսը փոխուել է օձ, խասամանը - խասման, հեկուցը - Էգուց, խարամը - Խարամ, յեփը - երբ:

Պատկերը նոյնն է Ամիր օղլու «Ոչխարն ու գէլը» ոտանաւորում, ուր չեմ գալ ժողովրդական ձեւը դառել է չեմ գա, պարստը - փետ, անմի - օղախատէր, սաւորի - սովորի, արուն - արին:

Դեռ շատ կան բարբառային աղաւաղումներ, որոնց պատկերը կը գծենք մի այլ յօդուածով:

Հաւաքել ու հրատարակել հայ աշուղական անյայտ երգերը եւ հարստացնել դուստնական գրականութեան դանձարանը, մի վսեմ աշխատանք է: Բայց այդ վեհ պարտականութիւնը կատարելու համար անհրաժեշտ է բանասիրական շատ լուրջ եւ բարեխիղճ մօտեցում, պահպանելով աշուղական ստեղծագործութիւնների լեզուական-բարբառային ու ոճական արուեստների էական առանձնատկութիւնները, նրբութիւններն ու գեղեցիկութիւնները: Անհրաժեշտ է նաև յատուկ ուշադրութիւն դարձնել աշուղների կենսագրական տուեալների հարազատ պատկերացման վրայ: Միայն նման բարեխիղճ եւ զիտական մօտեցումով հնարաւոր է բարձր պահել հայ աշուղական գրականութեան հմայքն ու վեհութիւնը:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

24 Փետրուար 1963, Փեհիւնի